ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/04 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «14» մարտի 2022թ.
ժամը 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ս.Բոշյան, Ն.Մուխսյան,
Բացող անդամներ՝ Ա.Ղուրշուդյան, Ա.Բոշյան
Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի բացման մասին
Գ.Բոշյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 5 /հինգ/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ	ք. Երևան, Խորենացի 33 tender@volios.am
2	«ԱՐԵՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	ք.Աբովյան, Երևանյան փող. 1/56 arevenergy1@gmail.com
3	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 2 hvarlen@mail.ru
4	«ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Շահազիզի 35 khoveyan@gmail.com
5	«ՄԱԼԿ» ՍՊԸ	ք. Գյումրի Տիգրան Մեծի 1 malkgroup@yahoo.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/04 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.
2.1) «ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում
ա) Մասնակցի ներկայացրած գինը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային գինը:
բ) Բացակայում է մասնագիտական փորձառությունը հավաստող նախորդ երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի, հանձնման-ընդունման, հարկային հաշիվների պատճենները՝ հրավերի 2.4.1 կետի պահանջներ:
«ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է աշխատանքների կատարման պայմանագիր, այն ինչ համաձայն հրավերի 2.4.1-ի պետք է լինի նախկինում կատարված էներգետիկ ոլորտի նախագծային աշխատանքների կատարման պայմանագիր:

2.2) «ԱՐԵՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում բացակայում է՝
ա) Իրական շահառուների վերաբերյալ հայտարարությունը՝ հավելված 1.3-ը,
բ) Մասնագիտական փորձառությունը հավաստող նախորդ երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրի կամ պայմանագրերի, հանձնման-ընդունման, հարկային հաշիվների պատճենները՝ հրավերի 2.4.1 կետի պահանջները:
գ) Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը հավաստող փաստաթղթերը՝ հրավերի 2.4.2-ի պահանջներ:

2.3) «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է՝
Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման եւ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

2.4) «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում

ա) մասնագիտական փորձառությունը հավաստող նախորդ երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունները ուսումնասիրելով պարզվեց, որ ներկայացվել են հետևյալ նմանատիպ պայմանագրերը՝

- Աշտարակի համայնքապետարան - 950000 դրամ,
- Կարբիի համայնքապետարան 2020 թվական – 600000 դրամ, բացակայում է հանձնման-ընդունման արձանագրությունը,
- Կարբիի համայնքապետարան 2021 թվական – 680000 դրամ, բացակայում է հանձնման-ընդունման արձանագրությունը

Այն ինչ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայության ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Ընդ որում՝ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Սույն ենթակետի նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի, հանձնման-ընդունման ակտ, հարկայի հաշիվներ և այլն) պատճենները:

Ուստի «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

2.5) «ՄԱԼԿ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է՝

Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման եւ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3) Հիմք ընդունելով վերը նշվածը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ին, «ԱՐԵՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին եւ «ԱՐԽԻ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել բոլոր անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները շտկելու դեպքում մասնակիցների ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով, հակառակ դեպքում՝ ոչ գնային պայմանները կգնահատվեն զրո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 18-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ս.ԲՈՇՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
		Ա.ԲՈՇՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ